ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 22 » մայիս 2025թ, No 3113 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության արդյունավետության, և որակի գնահատման N 01/2331-25 առ 19.05.2025թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վերագրանցման ընթացակարգով գրանցել թվով 3 դեղ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցամատյանում լրամշակման կատարումը՝ ավելացնելով վերագրանցման մասին տվյալները:

4.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի վերագրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է նախորդ հավաստագրի գործողության ժամկետը լրանալու հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի մայիսի «22 » - ի N3113 - Ա հրամանի

ՎԵՐԱԳՐԱՆՑՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ	Հավաստագրի գործողության ժամկետը լրանալու օրը
1	Գլյուկոզամին Պլյուս	գլյուկոզամին (գլյուկոզամինի հիդրոքլորիդ), քոնդրոիտինի սուլֆատ (քոնդրոիտին սուլֆատ նատրիում)	դեղահատեր թաղանթապատ	500մգ+400մգ; (30) պլաստիկե տարայում, (60) պլաստիկե տարայում, (100) պլաստիկե տարայում	ԻԲՆ Ալ-Հայթամ Ֆարմա Ինդաստրիս Քո., Պ.Օ. Բոքս 16232, Ալ Մանսուրա-Հալեպ	Սիրիա	ԻԲՆ Ալ-Հայթամ Ֆարմա Ինդաստրիս Քո., Պ.Օ. Բոքս 16232, Ալ Մանսուրա-Հալեպ	Սիրիա	ԱԴ	23025 16.05.2025	25.07.2024
2	Հեքսպանթեն	դեքսպանթենոլ, քլորհեքսիդին (քլորհեքսիդինի բիգլյուկոնատ)	մոմիկներ հեշտոցային	100մգ+16մգ; (10/2x5/)	Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Մասիս Կայարան, Գործարանային 22	Հայաստանի Հանրապետություն	Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Մասիս Կայարան, Գործարանային 22	Հայաստանի Հանրապետություն	ԱԴ	23026 16.05.2025	09.01.2025
3	ԴԵՍԱԼԼԵՐԳԱՆ	դեսլորատադին	լուծույթ ներքին ընդունման	0,5մգ/մլ; 120մլ ապակե շշիկ	Վետպրոմ ԱԴ, Օտեց Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400	Բուլղարիա	Դանսոն-ԲԳ Քո. ՍՊԸ, Օտեց Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400	Բուլղարիա	Դ	23027 16.05.2025	12.05.2025